Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
անհատ խորհրդատուի ընտրություն

05 դեկտեմբերի, 2023թ.

Վարկի համարը՝ IBRD 85720 «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագիր» (ՏՏԵԶԾ)
Առաջադրանքի անվանումը՝ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏ՝ անհատ խորհրդատու
Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ **LIC-20**
Վերջնաժամկետ՝ 2023թ. դեկտեմբերի 19-ը

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն իրականացնում է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիրը»: Ծրագրի առաջնահերթ նպատակներից է բարելավել ենթակառուցվածքային ծառայությունները և ինստիտուցիոնալ կարողությունները՝ Հայաստանի ընտրված մարզերում տեղական տնտեսության մեջ զբոսաշրջության ներդրման ավելացման համար: Ակնկալվում է, որ ծրագրի գործողությունները օգուտ կբերեն Հայաստանի հինգ մարզերի՝ Արարատի, Կոտայքի, Լոռու, Սյունիքի և Վայոց ձորի մարզերի բնակիչներին, զբոսաշրջիկներին և ձեռնարկություններին: Ծրագրի իրականացումը արդեն մոտենում է ավարտին և մի շարք ենթաբաղադրիչների վերանորոգման աշխատանքները արդեն ավարտվել են այդ թվում՝ Գյումրու Կումայի պատմական կենտրոնի վերականգնումը, Տաթևի վանք տանող ճանապարհի կառուցումը, Գառնիի «Քարերի սիմֆոնիա» տանող ճանապարհի վերականգնումը և այլն:

Հիմք ընդունելով Համաշխարհային բանկի հետ հաջողված փորձը և արդյունավետ համագործակցությունը, 2023 թվականին Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը մշակել է հետագա համագործակցության նոր հայեցակարգ: Մասնավորապես. Հայաստանում զբոսաշրջության ոլորտի զարգացման հիմնական ուղղությունը համարվում է կլաստերային ցանցային մոտեցման իրականացումը: Հետևաբար, ՀՀ-ն Համաշխարհային բանկի աջակցությամբ արդեն սկսել է պատրաստել Հայաստանի զբոսաշրջության և տարածաշրջանային ենթակառուցվածքների բարելավման ծրագիրը (այսուհետ՝ ՋՏԵԲ): ՋՏԵԲ Ծրագրի զարգացման նպատակներն են՝ (1) բարելավել քաղաքային և զբոսաշրջային ենթակառուցվածքները և տեղական տնտեսական զարգացման ինստիտուցիոնալ կարողությունները՝ ընտրված տարածքներում զբոսաշրջության ընդլայնված առաջարկների համար, (2) զբոսաշրջության դիվերսիֆիկացում Հայաստանում (նոր զբոսաշրջային ուղղությունների և ապրանքների ստեղծում՝ առնվազն մեկ նոր առաջարկ: յուրաքանչյուր տարածաշրջանում), (3) Հայաստանի մշակութային/պատմական հուշարձանների հանրահռչակում և այլն: ՋՏԵԲ նախագիծը մեծ ուշադրություն է դարձնում կլիմայի դիմացկունությանը և գյուղական կյանքին՝ ամբողջական և ինտեգրված մոտեցման միջոցով:

Նախատեսվում է վարձել Խորհրդատու գնումների մասնագետ՝ հետևյալ գործառույթները իրականացնելու նպատակով.

Անհատ խորհրդատուի աշխատանքային պարտականությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում.

1. Իրականացնել գնումների գործընթացներ՝ համաձայն համաձայնեցված պայմանավորվածությունների և ընթացակարգերի,
2. Գնումների փաստաթղթերի ժամանակին պատրաստման/մշակման ապահովում՝ օգտագործելով Բանկի ստանդարտ փաստաթղթերը կամ Բանկի համաձայնեցված ձևաթղթերը:
3. Գնումների մրցույթների հրապարակման կազմակերպում, մրցույթների վերաբերյալ պարզաբանումներ, հայտերի բացում, ստացված հայտերի/առաջարկների գնահատում,

4. Համապատասխան հաշվետվությունների պատրաստում,
5. Պայմանագրի պատրաստում և պայմանագրերի փոփոխությունների իրականացում,
6. ՀԲ-ի կողմից պահանջվող գնումների տվյալների վերաբերյալ հաշվետվությունների մշակում,
7. ՀԲ կանոնավոր վերահսկողության և հետքննության առաքելություններին աջակցություն
8. ՋՏԵԲ «Ծրագրի գնումների զարգացման ռազմավարություն» (այսուհետ՝ ԾԳՋՌ) փաստաթղթի պատրաստում/մշակում, ներառյալ գնումների պլանը՝ համաձայն ՀԲ արտաքին կայքում առկա ձևանմուշների:

Կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրի գործունեության ժամկետը կսահմանվի մինչև **2024թ-ի դեկտեմբերի 31-ը:**

Խորհրդատուների ընտրության չափանիշներն են՝

- Բիզնեսի կառավարման կամ հարակից ոլորտում առնվազն բակալավրի որակավորում,
- Առնվազն 7 տարվա աշխատանքային փորձ գնումների ոլորտում,
- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերում (աշխատանքային փորձը Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ կդիտարկվի որպես առավելություն),
- «Ծրագրի գնումների զարգացման ռազմավարության» մշակման փորձ,
- Համակարգչային հմտություններ (MS OFFICE),
- Անգլերենի գերազանց իմացություն:

Հետաքրքրված խորհրդատուն պետք է ներկայացնի տվյալներ իր կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ (CV), որակավորումը հիմնավորող փաստաթղթեր և անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն: Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի "Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎՋՄԲ-ի փոխառությունների և ՄՋԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ" սահմանված «Անհատ Խորհրդատուի ընտրության» ընթացակարգի համաձայն:
Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏՋՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:
Փաստաթղթեր պետք է ներկայացվեն էլ-փոստով՝ procurement@atdf.am հասցեներով, ոչ ուշ քան **2023թ. դեկտեմբերի 19-ը, ժամը 17:00**:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏՋՀ գրասենյակ,
Գնումների բաժին
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60: